

*Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի սոցիոլոգիայի և սոցիալական աշխարհաբանության ամբիոնի առաջատար, փիլիսոփայական գիտությունների թեկնածու*

## ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԵՎ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ

Հողվածում վերլուծաբար ներկայացված է ժամանակակից հայ ընտանիքում առաջացող կոնֆլիկտների որոշ պատճառներ և դետերմինանտներ, ինչպես նաև դրանց կանխարգելման և հաղթահարման վերաբերյալ ներկայացվել են պրակտիկ առաջարկներ:

**Հանգուցային բառեր և արտահայտություններ.** ընտանեկան կոնֆլիկտ, փոխըմբռնում, հոգածություն, դետերմինանտներ:

Ընտանիքը դարեր շարունակ եղել է մարդկության կայացման, երեխաների դաստիարակության, ընտանիքի անդամների սիրո, պաշտպանվածության և հոգածության օրրան: «Ընտանիք» յուրակերպ սոցիալական ինստիտուտը, ինչպես և բազում բարդ սոցիալական գոյավորներ, իր բնության բազմաբովանդակ իսկությամբ լիովին ու սպառնիչ չի որոշարկվում եզակի ու միանշանակ սահմանմամբ ու մեկնորոշմամբ: Գոյություն ունեն ընտանիքի՝ որպես սոցիալական ինստիտուտի բազմաթիվ բնորոշումներ և սահմանումներ, որոնք առանձնացնում են ընտանիքի կենսագործունեության և հարաբերությունների տարբեր կողմերը՝ սկսած պարզունակ բնութագրումներից՝ մինչև բովանդակային խորը նկարագրություն և սահմանում: Ըստ Յու. Ա. Գասպարյանի՝ «ընտանիքը արյունակցական կապերով և սիրո ու փոխադարձ հարգանքի գաղափարներով օժտված մարդկանց խումբ է մեկ հարկի տակ, որոնք կոչված են բավարարելու ոչ միայն ընտանիքի բոլոր ան-

դամների անձնական պահանջներն ու պահանջումները և բարելավել նրանց միջև եղած հարաբերությունները, այլ նաև պատասխանատվության զգացումով և ժամանակին կատարելու ընտանիքին հատուկ բոլոր գործառնությունները» [1, էջ 233]: Ընտանիքի սահմանման մեջ որպես ընտանիքի բաղկացուցիչ հատկություն էական է նաև նշել **ամուսինների տարասեռ զույգի** անհրաժեշտ տարրը, որ և սկզբունքորեն հնարավոր է դարձնում ընտանիքի և նրանում **որդեծնության** էական գործառնությունը, որով և՛ **մարդկության կենսաբանորեն գոյության սկզբունքային հնարավորությունը**, իսկ հաշվի առնելով հազարամյակներ ի վեր ու մինչ այժմ մարդկային կյանքում տեղ գտած անբնական, մարդկային հոգեկենսաբանականությունը՝ կենդանական ու հոգևոր բնությանը դավաճանող ու ժխտող, այդ կերպ՝ նաև ոչ-բանական ու հենց արատավոր համասեռամոլության կենսասպան ու նաև հոգեսպան երևույթը, տարասեռ ամուսնական զույգը ոչ միայն բնականորեն կենսաբար է մարդկության գոյության համար, այլև **անհրաժեշտ նախադրյալ է մարդկային ինքնության ու կյանքի բարոյահոգևոր կայացման և կատարելագործվող զարգացման**: Սահմանման մեջ հարկավոր է նկատի ունենալ ոչ միայն որդեծնությամբ, այլև **որդեգրությամբ** հնարավոր գավակների առկայությունն ու այդ կերպ՝ ընտանիքի անդամների միջև հնարավոր ոչ-արյունակցային կապը: Էական է նաև նկատի

ունենալ ծնողների՝ դեպի գավակները և գավակների՝ դեպի ծնողները **կարիքային հիմնախնդիրների նկատմամբ «հոգաձու» կապն ու գործառույթը՝ կախված մարդկային կարողությունից ու տարիքային բարոյահոգևոր հասունությունից:** Էական է նաև նշել միմյանց նկատմամբ սերը պահպանող և հարգանքը հիմնող, ուստի և հիմնորոշ նշանակալիություն ունեցող «**փոխըմբռնման» անհրաժեշտությունն ու նախընտրելիությունը ընտանիքի՝ որպես այդպիսին ու հենց բարեկարգ գոյության համար:** Ի մի բերելով ընտանիքը որպես այդպիսին գոյացնող ու այդ կերպ՝ բաղկացուցիչ (կամ էացնող ու այդ կերպ՝ էական) հատկությունները՝ կարելի է ամրագրել ընտանիքի՝ բնությունը բացահայտող կամ իսկությունը բացորոշող սահմանման բանաձև: **Ընտանիքը մարդկանց խումբ է՝ մեկ հարկի տակ ապրող, տարասեռ ամուսնական զույգի և գավակների արյունակցական կամ որդեգրական, փոխադարձ սիրո, հարգանքի ու փոխըմբռնման և կարիքային հիմնախնդիրներում փոխհոգաձուության բարոյահոգևոր կապերով ու գործառույթներով, ըստ մարդկային կարողության և տարիքային ու բարոյակրթական հասունության:** Հիմնվելով այդ սահմանման վրա՝ անդրադառնանք փոխակերպվող հասարակությունում հայ ընտանիքի գործառնությունում առաջացող որոշ դժվարությունների և կոնֆլիկտների խնդրին: Կարելի է նկատել, որ ընտանիքի՝ անհրաժեշտ ու նախընտրելի բարեկարգությամբ գոյության համար, որպես հիմնորոշ, սիրո ու փոխըմբռնման խախտման կամ նվազման պարագայում նշյալ բաղկացուցիչ հատկությունների ամնչությամբ կարող են ծագել և հենց առաջանում են տարաբնույթ կոնֆլիկտներ, քանի որ ամենայն կոնֆլիկտներում մշտապես ներկա է չհասկացման, թերհասկացման ու թյուրհասկացման գործոնը: Եվ ընդհակառակը, ճշմա-

րիտ հասկացումն ու փոխհասկացումն է միայն հնարավոր դարձնում կոնֆլիկտի կարգավորումը կամ հաղթահարումը [2, էջ 184]:

Հայ ժողովուրդը ընտանիքի բարոյահոգևոր գործառնությամբ և հոգևոր-մշակութային հարուստ ժառանգությամբ է սկզբունքորեն կայացրել իր ինքնության ու կենսունակության կայուն որակներ պատմական կենսագոյության իր ընթացքի տարատեսակ վայրիվերումների պայմաններում: Այսօր իրավիճակն այլ է. առկա են արմատական փոփոխություններ և ընտանիքի ինստիտուտը վտանգող ու հետզհետե խարխլող միտումներ: Հասարակության կյանքում ընտանիքների նման իրավիճակի ու միտումների պատճառներն, իհարկե, բազմազան են՝ քաղաքական և տնտեսական համակարգերի անկայունությունը, ոչ-ադեկվատ գործառնությունը, անպատասխանատվությունը հասարակության սոցիալ-մշակութային փորձի փոխանցման և սերունդների դաստիարակության հարցում և այլն: Ընտանիքի հիմնական գործառնությունը, այլևայլ գործոններով պայմանավորված, կերպափոխվում ու անբարեկարգության մեջ են կայացնում ու տեսադրում ընտանիքի որպիսությունը: Աննպաստ կերպափոխությամբ են ներկայանում՝

- սոցիալականացման/դաստիարակության գործառույթը. ծնող-երեխա փոխհարաբերությունների իրականացման գործընթացն ավելի միջնորդավորված բնույթ է կրում, մոր աշխատանքային, հանապաօրյա հացի հայթհայթման կամ «ինքնախրականացման», կարիերայի ժամանակային զբաղվածության հետևանքով երեխաների սոցիալականացման վրա ավելի մեծ ազդեցություն են թողնում ԶԼՄ-ները, ինտերնետը, սոցիալական ցանցերը, տարեկիցների անմիջական միջավայրը.

- վերարտադրության և սեռական կապերի կանոնակարգման գործառույթը. առկա է արտամուսնական կամ

նախաամուսնական կապերի լայն տարածում, աշխատանքային միգրացիայի հետևանքով երկու ընտանիքների առկայություն, երեխաների ծնելիության մակարդակի անկում.

- խնամքի և հոգածության գործառույթը. նկատվում է սիրո, փոխըմբռնման և հոգածության մակարդակի անկում, ինչի վկայությունն են հանդիսանում առանց ծնողական խնամքի երեխաների և մանկական իրավախախտների թվի աճը և այլն [3, էջ 66]:

Ընտանիքի առկայությունն անհրաժեշտ, թեև ոչ բավարար պայման է մարդու հիմնական կարիքների՝ սիրելու և սիրվելու, հասկացված և պաշտպանված լինելու, ինքնարտահայտման և նախընտրելիորեն կայացման համար: Ընտանիքը և ներընտանեկան փոխհարաբերությունները՝ ամուսնական, ծնողական, որդիական, ազգակցական, պահանջում են բոլոր անդամների համատեղ գործունեություն նախ՝ փոխհարմարման և ապա՝ միասնաբար գործառնության ուղղությամբ: Հայերն ավանդաբար արժևորում են ընտանիքը և ընտանեկան փոխհարաբերությունները, որոնցում և հաստատվում է հոգեբանական-էմոցիոնալ, ֆիզիոլոգիական, մտերմություն:

Այսօր Հայաստանում, որտեղ ընտանիքը արժեքային համակարգում ավանդաբար զբաղեցնում է առաջատար դիրք, նկատվում են՝

- ամուսնալուծությունների աճ. ՀՀ-ի ազգային վիճակագրական ծառայության տվյալներով՝ 2012 թ-ին գրանցված 19063 ամուսնություններին համապատասխանել է 3250 ամուսնալուծություն: Ի համեմատ դրան՝ 2013 թ-ին գրանցված ամուսնությունների թիվը նվազել է 18363, իսկ ամուսնալուծությունների թիվը աճել է՝ հասնելով 3756-ի [4],

- առանց գրանցման ամուսնություններ. ըստ 2011 թ-ի մարդահամարի տվյալների՝ 985 695 կանանցից 714711-ը փաստացի ամուսնացած են, 36113-ը ապրում

են առանց գրանցման [4],

- սոցիալական որբություն. ըստ ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տվյալների՝ 8 մանկատներում խնամվում են 899 երեխաներ: Խնամվող երեխաների 80%-ը ծնողներ ունեցող ընտանիքների երեխաներ են [4]:

Իր կենսագործունեության ընթացքում հայ ընտանիքը բախվում է տարաբնույթ հիմնախնդիրների հետ, որոնք կարելի է խմբավորել հետևյալ կերպ՝

- սոցիալ-տնտեսական, այս խմբի խնդիրները կապված են պետության վարած սոցիալական քաղաքականության, ընտանիքի կենսամակարդակի, բյուջեի ու ապահովվածության, աշխատանքային միգրացիոն գործընթացների հետ.

- սոցիալ-կենցաղային, որոնց շարքին կարելի է դասել սեփական բնակարանով ապահովվածությունը, կոմունալ, սան-հիգիենիկ պայմանները, կենցաղավարության մոդելները և այլն.

- սոցիալ-հոգեբանական, որոնք կապված են ամուսինների ներանձնային հոգեբանական խառնվածքների առանձնահատկությունների, համատեղելիության ու հարմարման, ընտանիքում դերային բաշխվածության, որոշումների կայացման ու իրականացման հարցերում փոխհամաձայնության, կախվածությունների ու սոցիալական վարքաձևերի հետ.

- սոցիալ-առողջապահական, որոնցից կարելի է առանձնացնել խրոնիկ հիվանդությունները, առողջապահական ծառայությունների անմատչելիությունը, երիտասարդ ամուսինների սեռական դաստիարակության ու փոխհարաբերությունների մասին գիտելիքների պակասը, անպտղության խնդիրները, սեռավարակները և այլն [5]:

Ընտանեկան հարաբերությունների առանձնահատկությունը իրենց առաջացման պատճառների և ընտանիքի անդամների հոգեբանական առողջու-

թյան և սոցիալական ակտիվության վրա դրանց ազդեցությամբ ընթացող ծավալման արդյունք է: Ընտանեկան կոնֆլիկտները դասվում են առավել տարածվածների շարքին: Մասնագետների գնահատմամբ՝ ընտանիքների 80–85 %-ն ունի տարաբնույթ կոնֆլիկտներ, իսկ մնացած 15–20 % -ի մոտ առկա են վեճեր [6, էջ 71]: Ի՞նչ ենք հասկանում ընտանեկան կոնֆլիկտ ասելով, որո՞նք են դրա առաջացման օբյեկտիվ–արտաքին և սուբյեկտիվ–ներքին պատճառները, ինչպիսի՞ հետևանքներ կարող են ունենալ այդ կոնֆլիկտները ընտանիքի արդյունավետ գործառնության վրա:

Ինչպես նշում էր Լ. Տոլստոյը, բոլոր երջանիկ ընտանիքները միմյանց նման են, իսկ բոլոր դժբախտ ընտանիքները դժբախտ են յուրովի: Թեև մասնագիտական գրականության մեջ առկա են ընտանիքի կոնֆլիկտների ու վեճերի առաջացման պատճառների, ընթացքի, հաղթահարման ուղիների վերաբերյալ բազմաթիվ փիլիսոփայական, հոգեբանական, սոցիոլոգիական և այլ տեսություններ, այնուամենայնիվ, այդ հարցը շարունակաբար մնում է որպես ակտուալ: Ժամանակակից կյանքի տեմպի արագացումը, արտաքին աշխարհի տարատեսակ ազդեցությունները ներընտանեկան հարաբերությունների վրա հանգեցնում են մշտական լարվածության մթնոլորտի, որի վերահսկողությունը և հաղթահարումը հաճախ դուրս է գալիս ընտանիքի անդամների հնարավորությունների և հմտությունների շրջանակներից: Յ. Բերկովիչը համարում է, որ ներընտանեկան կոնֆլիկտներն առաջանում են անձերի բախումից, յուրաքանչյուր անհատի ձգտումից՝ հասնելու ավելի մեծ իշխանության, ուշադրության, նյութական կամ հոգևոր վարձատրության: Նշանակալի են նաև կոնֆլիկտների օբյեկտիվ պատճառների կամ առիթների ընկալումները ընտանիքի անդամների կողմից և որպես հետևանք՝ առկա գեշտալտները ու ըստ

այդմ՝ վարքային մոդելների ձևավորումը [7, էջ 38–57]:

Ռ. Բլադի կողմից առանձնացվում են ընտանեկան կոնֆլիկտների առաջացման վրա ազդող մի շարք սոցիալական գործոններ, ինչպիսիք են՝ անձնային առանձնահատկությունները, անբավարար ռեսուրսների պայմաններում ներընտանեկան փոխադարձ պայքարը, հաղորդակցության անջրպետները, անհավասարակշիռ ակնկալիքները և այլն [8, էջ 209–219]: Հիմնվելով բազմաթիվ ազգային և արտասահմանյան հետազոտությունների վրա՝ ընտանեկան կոնֆլիկտների առաջացման պատճառները կարելի ներկայացնել հետևյալ տեսքով՝

### **Միջամուսնական կոնֆլիկտներ.**

- ամուսնական հարաբերությունների էթիկայի խախտում (դավաճանություն, խանդ),

- հոգեբանական և կենսաբանական անհամատեղելիություն,

- էմոցիոնալ անհամատեղելիություն (ամուսինների էմոցիոնալ կարիքների տարբերություն),

- ամուսնության ակնկալիքների անհամատեղելիություն,

- ղեկավար դիրքի և որոշումների կայացման անհանդուրժողականություն,

- դերային ընկալումների անհամատեղելիություն:

### **Ծնող–երեխա հարաբերություններ.**

- երեխաների դաստիարակության մոդելների անհամատեղելիություն,

- փոխըմբռնման բացակայություն,

- տարիքային կայացման առանձնահատկությունների վերաբերյալ գիտելիքների բացակայություն,

- ծնողավարման հմտությունների՝ սիրո և հոգացության բացակայություն:

### **Ընդհանուր տնտեսավարության.**

- կենցաղային դժվարություններ,

- կենցաղավարման մոդելների անհամատեղելիություն,

- ազգականների հետ հարաբերությունների և հաղորդակցության երկկողմանի անպատշաճություն, միջամ–

տության ավտորիտարություն,

- ցածր եկամուտներ և բաշխման մո-դելների անհամատեղելիություն:

ՀՀ-ում տեղի ունեցած և շարունակ-վող լուրջ սոցիալ-տնտեսական, քաղա-քական և մշակութային փոփոխություն-ներն իրենց ազդեցությունն ունեցան հայ ընտանիքի ավանդական կենսաձևի վրա: Համատարած աղքատությունը, գործազրկությունը, միգրացիան, բարո-յական «ազատության» և ավանդական արժեհամակարգի խարխուլումը, բազմա-թիվ այլ օբյեկտիվ և սուբյեկտիվ գոր-ծոններ հանգեցրին ընտանիքներում լարվածության և կոնֆլիկտների աճին: Ընտանեկան կոնֆլիկտներն առանձ-նահատուկ են իրենց առարկայի, սկզբ-նավորման, տեղայնացման, ընթացքի, հաղթահարման հնարավորությունների և կործանարար հետևանքների տեսա-կետից: Ընտանեկան կոնֆլիկտների դինամիկան բնորոշվում է դասական կոնֆլիկտներում առկա փուլերով՝ կոնֆլիկտային իրավիճակ, իրավիճա-կի գիտակցում, կողմերի առձակատում ու զարգացում, էմոցիոնալ վերապրում, կոնֆլիկտի հաղթահարում: Ընտանե-կան կոնֆլիկտի հաղթահարման կամ կարգավորման համար նշանակալի նախապայման է կոնֆլիկտային իրա-վիճակի աղեկվատ, խորացված, բազ-մակողմանի հասկացումը: Ամուսնա-կան կոնֆլիկտներում այդ հասկացումն իրականացվում է երկու ասպեկտներով՝ կոնֆլիկտող կողմերի փոխհարաբերու-թյունների հասկացմանն ուղղված քայ-լեր, որոնք ենթադրում են կոնֆլիկտի էության սահմանում և ձևակերպում, կոնֆլիկտի ընթացքում ընկալումների, զգացմունքների և գործողությունների փոխազդեցության բացահայտում, փո-խադարձ աջակցողական հարաբերու-թյունների ձևավորում, նպատակների ճշգրիտ սահմանում, նախընտրելի ար-դյունքին հասնելու համար ներքին և արտաքին ռեսուրսների բացահայտում և համապատասխան ուղղության ուժե-

րի ուղղորդում,

- ինքնահասկացում ու կոնֆլիկտային գործունեության մոտիվացիայի բացա-հայտում՝ մոտիվացոն կողմնորոշում-ների վերհանում և վերբալիզացում, կոնֆլիկտող կողմերի կարիքների, ար-ժեքների, ձգտումների համաչափ նշա-նակալիության գնահատում և արժևո-րում:

Այսպիսով՝ ընտանեկան կոնֆլիկտ-ների պատճառների բացահայտումը հիմք է հանդիսանում դրանց բանակա-նացման՝ անգիտակցական կամ ենթա-գիտակցական ոլորտից՝ վերբալ-գի-տակցական ոլորտ տեղափոխման, ինչը հնարավորություն է ընձեռում համա-տեղ խորհելու կոնֆլիկտի հաղթահար-ման ուղիների մշակման և ներդրման համար: Պատճառների բացահայտումը հնարավորություն է ընձեռում ընտանի-քի անդամներին հաղթահարել կոնֆլիկ-տի իրական բնույթի վերաբերյալ իրենց նախապաշարմունքներն ու կանխադա-տությունները, իրատեսական գնահա-տել դրանց հաղթահարման սեփական ռեսուրսները:

Ընտանեկան կոնֆլիկտների հե-տևանքները քննարկելիս մասնա-գիտական գրականության մեջ ան-դրադառնում են ինչպես ակնհայտ բացասական-դեստրուկտիվ՝ ընտանիքի ապակայունացման, ամողջ գործառնու-թյան քայքայման խնդիրներին, այնպես էլ դրական-կոնստրուկտիվ՝ նոր ընդհա-նուր նպատակների և արժեհամակարգի ձևավորմանը, թաքնված լարվածության հաղթահարմանը, ընտանիքի անդամ-ների անձնական որակների զարգաց-մանը: Ընտանեկան կոնֆլիկտային մթնոլորտն իր բացասական ազդեցու-թյունն է ունենում հատկապես առավել թույլ, դեռ ձևավորման փուլում գտնվող երեխաների հոգեբանության և սոցի-ալականացման վրա: Ինչպես ցույց են տալիս տարաբնույթ հետազոտություն-ները, մշտական կոնֆլիկտային վիճա-կում ապրող երեխաների մոտ հաճախ

առաջանում է մեղքի, տագնապի, վախի, անհանգստության զգացում: Միրո և հոգատարության մթնոլորտի բացակայությունը, մշտական վեճերը, էմոցիոնալ լարված ծնողական (երեխայի համար առավել նշանակալի ու հարազատ մարդկանց) հարաբերությունները, ֆիզիկական և հոգեբանական բռնության գործողությունները անջնջելի հետք են թողնում երեխաների հոգեբանության, հարաբերությունների կառուցման հմտության ձևավորման, վարքաձևերի վրա: Հաճախ առաջանում են նաև լուրջ առողջական խնդիրներ: Ընտանեկան կոնֆլիկտները քայքայիչ են ազդում ոչ միայն տվյալ՝ կոնֆլիկտը կրող ընտանիքի սոցիալական և տնտեսական կարգավիճակի վրա, այլև հանդիսանում են հասարակական գոյության անբարենպաստ գործոն: Կոնֆլիկտային ընտանիքի անդամը աշխատանք, դպրոց այլ նշանակալի շրջապատ է բերում իր էմոցիոնալ լարվածությունը, նյարդայնությունը, նկատվում է աշխատանքային փոխհարաբերությունների խախտում, աշխատունակության անկում և այլն:

Ինչպես հայտնի է, միշտ չէ, որ ընտանիքն ի գործու է ինքնուրույն հաղթահարել առաջացած կոնֆլիկտը, ինչը պայմանավորված է առաջացման պատճառների բազմազանությամբ, ընտանեկան համակարգի որոշ փակվածությամբ, ազգային մենտալիտետով: Մասնագի-

տական աջակցությանը դիմելը (խոսքը արտասահմանում այդքան տարածված ընտանեկան թերապևտների և ընտանեկան կոնֆլիկտների միջնորդների ինստիտուտի մասին է) մեզանում դեռևս որպես կարիք չի գիտակցվել: Արդյունքում ընտանեկան կոնֆլիկտների հաղթահարումը կամ կարգավորումը շարունակում է մնալ տվյալ ընտանիքի ներքին ռեսուրսների շրջանակներում: Ինչպես ցույց է տալիս հեղինակի՝ անապահով ընտանիքների հետ սոցիալական աշխատանքի պրակտիկ փորձառությունը, բազմաթիվ դեպքերում ընտանիքն ինքնուրույն ի գործու չէ հաղթահարել ներընտանեկան լարվածությունը և կոնֆլիկտները ինչպես օբյեկտիվ՝ կոմունալ անբարենպաստ պայմանների, ցածր եկամուտների, աշխատանքի բացակայության, այնպես էլ սուբյեկտիվ՝ կենսապահովման, կենցաղավարության, ծնողավարության, ներընտանեկան փոխհարաբերությունների կառուցման հմտությունների բացակայության կամ թերզարգացածության պատճառներով, ուստի կարևոր ենք համարում առաջարկել ընտանիքի կայունացմանը նպաստող հատուկ կենտրոնների ստեղծումը, որոնց նպատակն է լինելու՝ մատուցել ընտանիքներին համալիր ծառայություններ թե՛ նյութական, թե՛ հոգևոր կարիքների բացահայտման և ադեկվատ աջակցության ցուցաբերման համար:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Гаспарян Ю. А. Семья на пороге XXI века (социогические проблемы), СПб. 1999.
2. Джиджян А. Р. Социальный конфликт и общая теория его регулирования, Ер., 2009.
3. Антонов А. И., Медков В. М. Социология семьи, М., 1996.
4. <http://www.armstat.am>
5. ՀՀ-ում այս հիմնախնդիրների արտահայտվածության մասին ավելի հստակ պատկերացում կազմելու համար կարելի է դիտարկել Հայաստանի Հանրապետություն կյանքի որակի հետազոտություն որն իրականացվել է IPSC քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտի կողմից 2012 թվականին, [http://www.gov.am/u\\_files/file/presentations/IPSC\\_QL\\_2012\\_Report\\_30\\_03\\_2013\\_ARM.pdf](http://www.gov.am/u_files/file/presentations/IPSC_QL_2012_Report_30_03_2013_ARM.pdf)
6. Емельянов С. М. Практикум по конфликтологии. 3-е издание, СПб., 2009.
7. Bercovitch J., Social Conflict and Third Parties, Boulder, Colorado, USA, 1984.
8. Blake R. R. and Mouton J. S., Consultation. Reading, Mass., Addison – weasey, 1976.

ПРИЧИНЫ И ПОСЛЕДСТВИЯ КОНФЛИКТОВ  
В СОВРЕМЕННОЙ АРМЯНСКОЙ СЕМЬЕ

**АНАИТ ДЖИДЖЯН**

*АГПУ им. Х.Абовяна, кафедра социологии и социальной работы, к.ф.н., ассистент*

В статье проанализированы некоторые основополагающие причины возникновения конфликтов в современной армянской семье, связанные с общим ухудшением экономической и моральной ситуации в постсоветской Армении. Статистические данные, результаты некоторых социологических исследований, а также наблюдения в процессе работы с семьями группы риска дали возможность автору представить некоторые деструктивные последствия семейных конфликтов для детей, матерей и пожилых людей. В результате проведенного исследования поднимается вопрос о необходимости создания многофункциональных Центров по поддержке семьи и преодолению семейных конфликтов, при этом национальные и культурные особенности нашего народа.

CAUSES AND CONSEQUENCES OF CONFLICTS IN MODERN ARMENIAN FAMILY

**ANAHIT JIJYAN**

*Assistant of the Chair of Sociology and Social Work,  
Khachatur Abovian Armenian State Pedagogical University*

The article analyzes some basic causes of conflicts in modern Armenian family connected with the general decline of economic and moral situation in post-soviet Armenia. Statistical data, results of some sociological investigations, and also the results of observations in the process of social work with risk group families provided the author a possibility to present some destructive results of family conflicts for children, mothers and elders. In the result of the conducted investigation a question is raised to create a multi-functional centre for supporting families and resolving family conflicts taking into account national and cultural specificities of our people.